50531140	ՀՀ Լոռու մարզ,Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի արհեստական լճի հիմնանորոգման և տարածքի բարկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	350000	1	350,00
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ /հոդված-4235/					

50531140	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	460800	1	460,80
50531140	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության համակարգի կառուցման փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	36000	1	36,00
50531140	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքիԳուգարք բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	540000	1	540,00
50531140	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	200000	1	200,00
50531140	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն 4 թաղամասի ներհամայնքային փողոցներ հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	500000	1	500,00
50531140	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Գործարանային փողոցի հիմնանորգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	340000	1	340,00
50531140	Վանաձոր համայնքի Ստ. Զորյան փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	330000	1	330,00
50531140	Վանաձոր համայնքի Թևոսյան փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	400000	1	400,00
50531140	Վանաձոր համայնքի Ֆիդայիների փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	250000	1	250,00

50531140	Վանաձոր համայնքի Խուդյակովի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	200000	1	200,00
50531140	Վանաձոր համայնքի Հ. Հակոբյան փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	185000	1	185,00
50531140	Վանաձոր համայնքի Կոմիտասի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	55000	1	55,00
50531140	Վանաձոր համայնքի Իսրայել Օրու փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	55000	1	55,00
50531140	Վանաձոր համայնքի Մ. Մելքոնյան փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	70000	1	70,00
50531140	Վանաձոր համայնքի Ղ. Աղայան փողոցի սկզբնամասի հիմնանորոգման՝ ջրահեռացման համակարգով նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	200000	1	200,00
50531140	Վանաձոր համայնքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	48000	1	48,00
50531140	Վանաձոր համայնքի Նալբանդյան փողոց 2-րդ նրբանցքի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	99000	1	99,00
50531140	Վանաձոր համայնքի Սայաթ-Նովա փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	110000	1	110,00

50531140	Վանաձոր համայնքի Քիմիագործների 2-րդ փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	150000	1	150,00
50531140	Վանաձոր համայնքի Պ. Սևակ փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն	ԳՀ	դրամ	180000	1	180,00
	Ծառայություններ /հոդված-5134/ Նախագծահետազոտական ծախսեր					
	նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ					***16100,00***
71241200	Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոցի մի հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1400000	1	1400,00
71241200	Վանաձոր համայնքի Ռ. Բոշյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2600000	1	2600,00
71241200	Վանաձոր համայնքի Տարոն-3 թաղամասի փողոցների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2200000	1	2200,00
71241200	Վանաձոր համայնքի Ստ. Զորյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	3300000	1	3300,00
71241200	Վանաձոր համայնքի Նիզամու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1900000	1	1900,00

71241200	Վանաձոր համայնքի Մարշալ Խուդյակով փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2000000	1	2000,00
71241200	Վանաձոր համայնքի Գայի փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1600000	1	1600,00
71241200	Վանաձոր համայնքի Ամիրյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1100000	1	1100,00
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ					**12100,00**
71241200	Վանաձոր համայնքի Նար-Դոս փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1950000	1	1950,00
71241200	Վանաձոր համայնքի Հերացու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	900000	1	900.00
71241200	Վանաձոր համայնքի Խնձորուտ թաղամասի 2-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2400000	1	2400,00
71241200	Վանաձոր համայնքի Սունդուկյան հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1850000	1	1850,00
71241200	Վանաձոր համայնքի Րաֆֆու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1650000	1	1650,00

71241200	Վանաձոր համայնքի Աճառյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	950000	1	950,00
71241200	Վանաձոր համայնքի Կնունյանց փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2450000	1	2450,00
Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ						**10100,00**
71241200	Վանաձոր համայնքի Ֆիդայինների փողոցի մի հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2500000	1	2500,00
71241200	Վանաձոր համայնքի Այվազովսկու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	400000	1	400,00
71241200	Վանաձոր համայնքի Տիգրանյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	600000	1	600,00
71241200	Վանաձոր համայնքի Նալբանդյան փողոց /Ձորյանից վերև/ և Նալբանդյան փողոց 2-րդ նրբանցքի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	900000	1	900,00
71241200	Վանաձոր համայնքի Թևոսյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	4000000	1	4000,00

71241200	Վանաձոր համայնքի Կոմիտաս փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	500000	1	500,00
71241200	Վանաձոր համայնքի Իսրայել Օրու փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	500000	1	500,00
71241200	Վանաձոր համայնքի Մ. Մելքոնյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	700000	1	700,00
71351380	Վանաձոր համայնքի շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի ուսումնասիրության սեյսմիկ գնահատման և եզրակացության տրամադրման ծառայություններ	ԳՀ	դրամ	15000000	1	15000,00
71351380	Վանաձոր համայնքի շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի ուսումնասիրության սեյսմիկ գնահատման և եզրակացության տրամադրման ծառայություններ	ԳՀ	դրամ	15000000	1	15000,00
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ					
71241200	Վանաձոր համայնքի Ղ. Աղայան փողոցի սկզբնամասի և ջրահեռացման համակարգի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2000000	1	2000,00
71241200	Վանաձոր համայնքի Հակոբյան փողոցի մի մասի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1850000	1	1850,00
71241200	Վանաձոր համայնքի Քիմիագործների 2-րդ փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1500000	1	1500,00

71241200	Վանաձոր համայնքի Սայաթ-Նովա փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1100000	1	1100,00
71241200	Վանաձոր համայնքի Պարույր Սևակ փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1800000	1	1800,00
71241200	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	5120000	1	5120,00
71241200	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	6000000	1	6000,00
						19370,00
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ /հոդված - 5134/					
71241200	Վանաձորի համայնքի Խուդյակովի փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2000000	1	2000,00
71241200	Վանաձորի համայնքի Տարոն-4 թաղամասի ներհամայնքային փողոցների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	5000000	1	5000,00
71241200	Վանաձոր համայնքի Գործարանային փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	3400000	1	3400,00

71241200	Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի մի շարք փողոցների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	2000000	1	2000,00
71241200	Վանաձոր համայնքի Հակոբյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1500000	1	1500,00
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ /հոդված -5112/					
71241200	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի փողոցային լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերում	ԳՀ	դրամ	3000000	1	3000.0
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ /հոդված -5134/					
71241200	Վանաձոր համայնքի մի շարք շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	8 000 000	1	8000.0
	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ /հոդված -5134/					
71241200	Վանաձոր համայնքի մի շարք շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն	ԳՀ	դրամ	1 000 000	1	1000.0
	Բաժին-06 խումբ-6 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)					
	Կոմունալ ծառայություններ/հոդված 4213/					
45111240	Վանաձոր համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառույցների ապամոնտաժման աշխատանքներ	ԳՀ	դրամ	9953880	1	9953,88

Աշխատանքներ/հոդված 5112/						
45221142	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրում /1-ին փողոց բազմաբնակարան շենքի հարևանությամբ/ խաղահրապարակի կառուցման աշխատանքներ	ԳՀ	դրամ	14400000	1	14400,00
45221142	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրում (Էներգետիկների 5-րդ և 4-րդ փողոցների միջև) խաղահրապարակի կառուցման աշխատանքների ձեռքբերում	ԳՀ	դրամ	13563600	1	13563,60
45211137	Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրում սպորտային խաղահրապարակի կառուցման աշխատանքներ	ԳՀ	դրամ	12876000	1	12876,00
45221142	Վանաձոր համայնքի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի մինի ֆուտբոլի մարզադաշտի կառուցման աշխատանքներ	ԳՀ	դրամ	39378000	1	39378,00
45221142	Վանաձոր համայնքի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի մինի ֆուտբոլի մարզադաշտի կառուցման լրացուցիչ աշխատանքներ	ՄԱ	դրամ	2523236	1	2523,24
45221142	Վանաձոր համայնքի Վանաձորի պանթեոնում ցանկապատի կառուցման աշխատանքներ	ԳՀ	դրամ	2210444	1	2210,44
45221142	Վանաձոր համայնքի Չուխաջյան 34 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	30189708	1	30189.7
45221142	Վանաձոր համայնքի Շինարարների փողոցի 5/1 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	15747400	1	15747.4
45221142	Վանաձոր համայնքի Մոսկովյան փողոցի թիվ 56,58,60 բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	26496900	1	26496,9
45221142	Վանաձոր համայնքի Զորյան փողոցի թիվ 21, Տերյան փողոցի թիվ 14Ա և 14Բ շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	29138229	1	29138,23

45221142	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 55 և 59, Նժդեհի փողոցի թիվ 7 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	37047700	1	37047,7
	Աշխատանքներ/հոդված 5113/					
45221142	Վանաձոր համայնքի Տարոն 4 թաղ., Մեքենաշինարարների 54 և 61 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	30272337	1	30272,337
45221142	Վանաձոր համայնքի Բելառուսների 36-39,41,42Ա,42Բ բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	27321599	1	27321,599
45221142	Վանաձոր համայնքի Համբարձումյան փողոց թիվ 7բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	22576282	1	22576,282
45221142	Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոց թիվ 49բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	17493753	1	17493,753
45221142	Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոց թիվ 39/1 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	23863671	1	23863,671
	Ծառայություններ/հոդված 5112/					
71351540	Վանաձոր համայնքի Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի մինի ֆուտբոլի մարզադաշտի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	291000	1	291,00
98111140	ՀՀ Լոռու մարզի, Վանաձոր համայնք, Շահումյան գյուղի միջնակարգ դպրոցի մինի ֆուտբոլի մարզադաշտի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	251348	1	251,348
71351540	Վանաձոր համայնքի Չուխաջյան 34 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	603780	1	603,78

	Ծառայություններ/հոդված 5112/					
71351540	Վանաձոր համայնքի Շինարարների փողոց 5/1 բակի հիմնանորոգման տեխնիկական հսկողության ծառայություններ	ԳՀ	*դրամ*	*314900*	*1*	*314,9*
71351540	Վանաձոր համայնքի Մոսկովյան փողոցի թիվ 56,58,60 բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	ԳՀ	*դրամ*	*529900*	*1*	*529,9*
71351540	Վանաձոր համայնքի Զորյան փողոցի թիվ 21, Տերյան փողոցի թիվ 14Ա և 14Բ շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքներիտեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	582800	1	582,80
71351540	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 55 և 59, Նժդեհի փողոցի թիվ 7 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	740900	1	740,9
	Ծառայություններ/հոդված 5113/					
71351540	Վանաձոր համայնքի Տարոն 4 թաղ., Մեքենաշինարարների 54 և 61 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	605446	1	605,446
71351540	Վանաձոր համայնքի Բելառուսների 36-39,41,42Ա,42Բ բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	546432	1	546,432
71351540	Վանաձոր համայնքի Համբարձումյան փողոց թիվ 7բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	451525	1	451,525
71351540	Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոց թիվ 49բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	349875	1	349,875

71351540	Վանաձոր համայնքի Գր.Լուսավորչի փողոց թիվ 39/1 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	477273	1	477,273
	Ծառայություններ/հոդված 5112/					
98111140	Վանաձոր համայնքի Շինարարների փողոց 5/1 բակի հիմնանորոգման հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ	113400	1	113,4
98111140	Վանաձոր համայնքի Մոսկովյան փողոցի թիվ 56,58,60 բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ	190770	1	190,77
	Ծառայություններ/հոդված 5113/					
98111140	Վանաձոր համայնքի Զորյան փողոցի թիվ 21, Տերյան փողոցի թիվ 14Ա և 14Բ շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ	174820	1	174,82
98111140	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծ պողոտայի թիվ 55 և 59, Նժդեհի փողոցի թիվ 7 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	ՄԱ	դրամ	222300	1	222,30
	Աշխատանքներ/հոդված 5113/					
45221142	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պող. թիվ 27 և 29 շենքերի բակի կապիտալ նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	24235414	1	24235.4
45221142	Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	59435960	1	59435,90
45221142	Վանաձոր համայնքի Երևանյան խճուղու թիվ 72 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	14402700	1	14402,70
						176649662,00

45221142	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի 10բ և 12 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	33733913	1	33733,91
45221142	Վանաձոր համայնքի Տիգրանյան 3 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	27130613	1	27130,61
45221142	Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոց 28,29,30 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	61792153	1	61792,15
45221142	Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոց 64,66 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	31489333	1	31489,33
45221142	Վանաձոր համայնքի Համբարձումյան փողոց 9 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	22503650	1	22503,65
Ծառայություններ /հոդված 5113/						
71351540	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պող. թիվ 27 և 29 շենքերի բակի կապիտալ նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	500000	1	500.0
71351540	Վանաձոր համայնքի Երևանյան խճուղու թիվ 72 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	288000	1	288,00
						3409409
71351540	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի 10բ և 12 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	674678	1	674,678
71351540	Վանաձոր համայնքի Տիգրանյան 3 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	542612	1	542,612
71351540	Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոց 28,29,30 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	1112259	1	1112,259

71351540	Վանաձոր համայնքի Չուխաջյան փողոց 64,66 բազմաբնակարան շենքերի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	629787	1	629,787
71351540	Վանաձոր համայնքի Համբարձումյան փողոց 9 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	450073	1	450,073
	Ծառայություններ					
98111140	Վանաձոր համայնքի Համբարձումյան փողոց 9 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	139000	1	139.0
	Աշխատանքներ /հոդված 5113/					
45221142	Վանաձոր համայնքի Գ.Լուսավորիչի թիվ 40 և Գ.Նժդեհի թիվ 1 բազմաբնակարան շենքերի բակի կապիտալ նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	26079860	1	26079,86
	Ծառայություններ /հոդված 5113/					
71351540	Վանաձոր համայնքի Գ.Լուսավորիչի թիվ 40 և Գ.Նժդեհի թիվ 1 բազմաբնակարան շենքերի բակի կապիտալ նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն	ԳՀ	դրամ	520000	1	520,00
	Աշխատանքներ /հոդված 5113/					
45231220	Վանաձոր համայնքի Շինարարների, Վ. Համբարձումյան և ՈՒսանողական փողոցների հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքների ձեռքբերում	ՄԱ	դրամ	56198880	1	56198.88
45231220	Վանաձոր համայնքի Շինարարների, Վ.Համբարձումյան և Ուսանողական փողոցների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում /պետության մասնաբաժին/	ԲՄ	դրամ	252903600	1	252903,6
	Ծառայություններ /հոդված 5113/					

71351540	Վանաձոր համայնքի Շինարարների, Վ.Համբարձումյան և Ուսանողական փողոցների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում /պետության մասնաբաժին/	ԳՀ	դրամ	990000	1	990,0
98111140	Վանաձոր համայնքի Շինարարների, Վ.Համբարձումյան և Ուսանողական փողոցների հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում /պետության մասնաբաժին/	ՄԱ	դրամ	1694700	1	1694,7
	Աշխատանքներ /հոդված 5112/					
45221142	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի թիվ 40,42 և 44 շենքների բակի կապիտալ նորոգման աշխատանքներ	ԳՀ	դրամ	38657200	1	38657,20
	Ծառայություններ /հոդված 5112/					
71351540	Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի թիվ 40,42 և 44 շենքների բակի կապիտալ նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	ԳՀ	դրամ	752400	1	752,40
	Բաժին -08 խումբ -1 դաս-1 Հանգստի և սպորտի ծառայություններ					
	Սպորտային միջոցառումներ/հոդված 4239/					
92621110	Սպորտային միջոցառուների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	11315000	1	11315,00
92621110	Սպորտային միջոցառուների կազմակերպում	ԷԱՃ	դրամ	12270400	1	12270,40
	Բաժին -08 խումբ -4 դաս-1 Երիտասարդական ծրագրեր					
	Ծառայություններ /հոդված 4239/					
79951100	Վանաձոր համայնքի կարիքների համար 2026 թվականի «Կանաչ էներգիա կայուն Վանաձոր» ծրագրի շրջանակներում կայուն էներգիայի օրերի կազմակերպման ծառայությունների ձեռքբերում	ԷԱճ	դրամ	1494300	1	1494,30
	Բաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգստի, մշակույթ և կրոն					
	մշակութային միջոցառումներ/հոդված 4239/					

79951110	մշակութային միջոցառումների կազմակերպում	ԷԱճ	դրամ	9508700	1	9508,7
79951110	<<Վանաձորի օր>> ավանդական համաքաղաքային միջոցառման կազմակերպման ծառայություններ	ԷԱճ	դրամ	9750000	1	9750,00
	ծառայություն/4239/					
79951100	<<Լավ էլի>> խմբի 30-ամյակին նվիրված համերգի կազմակերպում	ՄԱ	դրամ	980000	1	980,00
	Բաժին -09 խումբ-01 դաս-01					
	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզ հասցեում նոր մասնաշենքի կառուցում **(սուբվենցիոն ծրագիր)**					
	Ծառայություն /հոդված 5112/					
71351540	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների տեխնիկական ծառայություն (համայնքի մասնաբաժին)	ԳՀ	դրամ	745800	1	745.8
98111140	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	*	1	*
98111140	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն	ՄԱ	դրամ	1235000	1	1235.0
	Աշխատանք /հոդված 5112/					
45211228	Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տավրոս թաղամաս 4-րդ փողոց 34/1 մանկապարտեզի հասցեում նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներ (համայնքի մասնաբաժին)	ԲՄ	դրամ	57924000	1	57924.0
45211228	Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման/2-րդ փուլ, ավարտում/ լրացուցիչ աշխատանքների ձեռքբերում	ՄԱ	դրամ	1703040	1	1703.04

	Բաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգիստ, մշակույթ և կրոն					
	մշակութային միջոցառումներ/հոդված 4239/					
79411210	գնումների գործավարական գործընթացի կազմակերպման ծառայություններ	ՄԱ	դրամ	600000	1	600,0
79951100	միջոցառումների հետ կապված ծառայություններ	ԷԱՃ	դրամ	11570000	1	11570,0
79951110	մշակութային միջոցառումների կազմակերպում	ՄԱ	դրամ	24800000	1	24800,0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում «Ջիպսի Քինքս» երաժշտական խմբի մասնակցություն	ՄԱ	դրամ	16000000	1	16000,0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում «Կարապետյաններ Բենդ» երաժշտական խմբի մասնակցություն	ՄԱ	դրամ	6000000	1	6000.0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում երգչուհի Իվետա Մուկուչյանի մասնակցություն	ՄԱ	դրամ	4400000	1	4400,0
79951110	«Վանաձորի օր» համաքաղաքային ավանդական տոնակատարության շրջանակներում հաղորդավար Ռաֆայել Երանոսյանի մասնակցություն	ՄԱ	դրամ	1665000	1	1665,0
79951110	Ամանորի և Սուրբ Ծննդյան միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում	ԷԱՃ	դրամ	19 365 000	1	19365.0

*համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի

Գնումների բաժնի պետ՝ **Դավիթ Հակոբյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1950

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1705 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 24 սեպտեմբերի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1705 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 24 սեպտեմբերի 2026 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 08 հունվարի 2025 թվականի Վանաձոր համայնքի Թատերական փողոցի թիվ 6 շենքի բակում տրամադրված բարեկարգման թույլտվությունը անվավեր ճանաչելու մասին» թիվ 1705 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Որոշման <<Վարչական ակտ ընդունելու համար իրավական հիմք հանդիսացող փաստաթղթերը>> կետում՝

ա) 01.08.2025թ. թվերը փոխարինել 08.01.2025թ. թվերով

բ)5 <<Թումանյան>> բառը փոխարինել՝ <<Թատերական>> բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1951

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԱՍՏՂԻԿ ԱՇՈՏԻ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհար Հմայակի Դարբինյանի դիմումն իր անգործունակ աղջկա՝ Աստղիկ Աշոտի Անդրանիկյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2026 թվականի նոյեմբերի 04-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 17, կետ 5), նաև հիմք ընդունելով Աստղիկ Աշոտի Անդրանիկյանին անգործունակ ճանաչելու մասին ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի մայիսի 22-ի թիվ ԼԴ/1619/02/26 վճիռը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Կնունյանց փողոցի թիվ 48 շենքի թիվ 21 բնակարանի բնակիչ Գոհար Հմայակի Դարբինյանին (ծնված՝ 15.04.1966թ., անձնագիր՝ AO 0240644 տրված՝ 10.06.2025թ., 018-ի կողմից) նշանակել իր անգործունակ աղջկա՝ Աստղիկ Աշոտի Անդրանիկյանի (ծնված՝ 17.08.1986թ., անձնագիր՝ AR 0472549, տրված՝ 03.10.2017թ., 018-ի կողմից) նկատմամբ խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1952

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԼԵՎՈՆ ԱՐԹՈՒՐԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Տիգրանի Տեր-Մովսիսյանի դիմումն իր անգործունակ տղայի՝ Լևոն Արթուրի Ղուկասյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2026 թվականի նոյեմբերի 04-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 17, կետ 6), նաև հիմք ընդունելով Լևոն Արթուրի Ղուկասյանին անգործունակ ճանաչելու մասին ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ ԼԴ/0685/02/26 վճիռը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Աբովյան փողոցի 1-ին փակուղու թիվ 13 տան բնակիչ Անուշ Տիգրանի Տեր-Մովսիսյանին (ծնված՝ 15.02.1983թ., նույնականացման քարտ՝ 018269555 տրված՝ 08.06.2025թ., 066-ի կողմից) նշանակել իր անգործունակ տղայի՝ Լևոն Արթուրի Ղուկասյանի (ծնված՝ 19.08.2001թ., նույնականացման քարտ՝ 010513562, տրված՝ 22.08.2019թ., 018-ի կողմից) նկատմամբ խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1953

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԴԻՄԱՑԻ Ե ԹԱՂԱՄԱՍ 1 ՇԵՆՔ, 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Սամադի Յարիբեկյանի 16.09.2026 թվականի թիվ 02/14541 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14032024-06-0003 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Դիմացի Ե թաղամաս 1 շենք, 9 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ղ. Աղայան փողոց, 97 շենք, 9 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1954

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 06.11.2026 թվականին կազմված արձանագրությունները, Նեցուկ ՀՋ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 09.11.2026 թվականի թիվ 03Ա/49-26 զեկուցագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ ***որոշում եմ***.

Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի թիվ 40 մանկապարտեզի բարեկարգման աշխատանքներին խոչընդոտող 1 /մեկ/ ծառի, Թևոսյան 3 հասցեում առկա 5 /հինգ/ բարդիների, Չուխաջյան 4 հասցեում առկա 2 /երկու/ ծառերի, Չուխաջյան 1, 3, 5, 7, 11, 28, 30, 6, 10, 12 շենքերի խաղահրապարակում առկա 2 /երկու/ ծառերի, Բանյոյի 8 հասցեում, մայթեզրին առկա 1 /մեկ/ չորացած ծառի, թիվ 24 դպրոցի դիմացի մայթեզրին առկա 4 /չորս/ չորացած ծառերի, Թումանյան 7 շենքի բակում առկա 2 /երկու/ ծառ-թփերի, Թատերական 6 հասցեում առկա 1 /մեկ/ վտանգ ներկայացնող ծառի, Տերյան 14 հասցեում 1 /մեկ/ թեքված ծառի, Զորյան 89 շենքի բակի հետնամասում առկա 2 /երկու/ ընկուզենիների հատման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1955

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1560 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Հարությունի Տիսինյանի (ծնված՝ 20.02.1950 թ.) 03.11.2026 թվականի թիվ 02/17482 դիմումը, 24 օգոստոսի 2026 թվականի Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1560 որոշումը, 05.10.2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքների (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-05102026-06-0430 որոշումը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 09.10.2026 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2026ANVTBU), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 24 օգոստոսի 2026 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամասի 13-րդ փողոցի թիվ 5 հասցեում գտնվող, Աշոտ Հարությունի Տիսինյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինականացնելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու մասին և Վանաձոր համայնքի ղեկավարի 25 մայիսի 2026 թվականի թիվ 1028 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1560 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1. Որոշման հավելվածը փոխել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հավելվածով:

2. Որոշման մեջ՝ 1-ին կետում «341.62քմ (ներքին մակերեսը՝ 282.86քմ.)» բառերը փոխարինել՝ «336.17քմ (ներքին մակերեսը՝ 277.41քմ.)» բառերով, իսկ «22.59քմ» թիվը փոխարինել՝ «27.94քմ» թվերով:

3. Որոշման մեջ՝ 3-րդ կետում «341.62քմ (ներքին մակերեսը՝ 282.86քմ.)» բառերը փոխել՝ «336.17քմ (ներքին մակերեսը՝ 277.41քմ.)» բառերով, իսկ «672650 (վեց հարյուր յոթանասուներկու հազար վեց հարյուր հիսուն)» բառերը փոխարինել՝ «661910 (վեց հարյուր վաթսունմեկ հազար ինը հարյուր տասը)» բառերով:

4. Որոշման մեջ՝ 2-րդ կետում «0.099հա» թիվը փոխարինել՝ «0.09847հա» թվով:

5. Աշոտ Հարությունի Տիսինյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարի տարբերությունը՝ 10740 ((672650-661910) տաս հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումարը ետ վերադարձնել Աշոտ Հարությունի Տիսինյանի 1570070534140100 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1956

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ 1-Ի ՓՈՂՈՑ ԹԻՎ 43 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ՎԱԳԻՖԻ ՀՈՎԱՆԵՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Վագիֆի Հովանեսյանի (ծնված՝ 18.12.1973թ.) լիազորված անձ՝ Արմեն Սամսոնի Բաղդասարյանի (ծնված՝ 13.03.1972թ.) 30.09.2026թ. թիվ 02/15393 դիմումը, 15.05.2026թ. տրված թիվ 47 ԲԱ 5193817 (նոտարական ակտի կոդ՝ 741-20260608-67-10168924) լիազորագրի ռուսերեն լեզվից հայերեն թիվ 3011 թարգմանությունը, 09.08.2026թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4741 (նոտարական ակտի կոդ՝ 741-20260809-84-10398262) վկայագիրը, 28.03.1989թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 03.11.2026թ տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-287/26 Ի եզրակացությունը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ 1-ի փողոց թիվ 43 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 350.0քմ և դրան կից 15.71քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1965-1991թթ, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 365.71քմ:

Ղեկավարվելով՝ ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Անահիտ Վագիֆի Հովանեսյանի (ծնված՝ 18.12.1973թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ 1-ի փողոց թիվ 43 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 350.0քմ մակերեսով հողամասին կից 15.71քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Անահիտ Վագիֆի Հովանեսյանի (ծնված՝ 18.12.1973թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը, Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ 1-ի փողոց թիվ 43 հասցեում, կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 365.71քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հաստատել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ 1-ի փողոց թիվ 43 հասցեում գտնվող Անահիտ Վագիֆի Հովանեսյանին (ծնված՝ 18.12.1973թ.) պատկանող բնակելի տան զբաղեցրած 0,036571հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք , Խնձորուտ թաղամասի 1-ին փողոց, 43 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք. Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1957

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ 38 ՇԵՆՔ, 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱԹԵՎԻԿ ԷԴԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաթևիկ Էդիկի Դավթյանի 29.10.2026 թվականի թիվ 02/17205 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082026-06-0063 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս 38 շենք, 8 հասցեում գտնվող, Տաթևիկ Էդիկի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տարոն-4 Բելառուսական թաղամաս, 38 շենք, 8 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1958

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁԱՔԱՐՅԱՆ ՓՈՂ. ԹԻՎ 4/4Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՄ ԳՈՒՐԳԵՆԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Գուրգենի Դավթյանի 13.10.2026 թվականի թիվ 02/16163 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1910857 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ձաքարյան փող. թիվ 4/4ա հասցեում գտնվող Արամ Գուրգենի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Հ. Ձաքարյան փողոց, 4/6 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1959

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՓՈՂՈՑ 10/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾՈՎԻՆԱՐ ՍՈՒՐԵՆԻ ԱՂԱՍԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ծովինար Սուրենի Աղասարյանի 12.10.2026 թվականի թիվ 02/16047 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30072026-06-0048 վկայականը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 05.10.2026թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026NQGLE8, 2026QQNYZU, 2026KKFUQQ), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ա. Շիրվանզադեի փողոց 10/5 հասցեում գտնվող Ծովինար Սուրենի Աղասարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1, 2 և 3 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ա. Շիրվանզադեի փողոց 10/5 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.00108հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 9.9քմ մակերեսով հասարակական նշանակության շինությանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Շիրվանզադեի փողոց, 19 խանութ:

բ. 0.00392հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 36.4քմ մակերեսով հասարակական նշանակության շինությանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Շիրվանզադեի փողոց, 19/1 խանութ:

գ. 0.00085հա մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 7.8քմ մակերեսով հասարակական նշանակության շինությանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ա. Շիրվանզադեի փողոց, 19/2 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1960

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1625 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Կորյունի Անտոնյանի 07.10.2026 թվականի թիվ 02/15779 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22072020-06-0039 վկայականը,07 սեպտեմբերի 2026 թվականի Վանաձոր համայնքի թիվ 1625 որոշումը, 29.09.2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-29092026-06-0224 որոշումը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 07 սեպտեմբերի 2026 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 88/1-1 հասցեում գտնվող Հովհաննես Կորյունի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված հասարակական նշանակության շինություններն օրինականացնելու մասին» թիվ 1625 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1. Որոշման վերնագիրը «օրինականացնելու» բառից հետո լրացնել «, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու» բառերով:

2. Որոշման նախաբանը «ենթակետով» բառից հետո լրացնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով» բառերով:

3. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1-ին կետով.

4. 1. Փոխել Վանաձոր քաղաքի Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 88/1-1 հասցեում գտնվող 0.00048հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:»:

5. Որոշման մեջ «1-ին» և «2-րդ» կետերը կարդալ հետևյալ հաջորդականությամբ «2-րդ» և «3-րդ» կետեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1961

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂ. ԹԻՎ 2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԱՐԱՏ ԺՈՐԱՅԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարատ Ժորայի Մարկոսյանի 19.08.2026 թվականի թիվ 02/13699 դիմումը, 23.02.2026 թվականի սեփականության իրավունքի թիվ 1256 վկայագիրը,/ նոտարական ակտի կոդ:594-20260318-105-9911182/, 27.07.2023 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 3399 պայմանագիրը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման)իրավունքի գրանցման թիվ 1871023 վկայագիրը, «Մհեր Գևորգյան» ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը և շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ, 27-րդ, 31-րդ կետերով և 32-րդ կետի բ) ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Մարատ Ժորայի Մարկոսյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր Վանաձոր համայնքի Խորենացու փող թիվ 2 շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանում իրականացված թվով 4 ինքնակամ ձևափոխությունները:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված թվով 4 ինքնակամ ձևափոխությունների օրինականացման համար սահմանված վճարը՝ 12824 (տասներկու հազար ութ հայրուր քսանչորս) ՀՀ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1962

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 5/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10072024-06-0017 վկայականը, «ԱՍՏՐՈԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց 5/4 հասցեում գտնվող Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված հողամասը՝ համաձայն «ԱՍՏՐՈԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց 5/4 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.00296հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Շինարարների փողոց, 5/6 հողամաս:

բ. 0.00176հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Շինարարների փողոց, 5/7 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2026 թվականի N 1963

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՀՈՒԼԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1359 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

